

ՏԱԶԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵՋԻՒՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1911

ԹԻՒ 36

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ. — Զարին ճակատագիրը
ՍԻՆԵՆԱՅ ԴՊՐՈՅ. — (Գ.) Վարդապետանոց Սիւնեաց
Որբուկներու արցունքը
Քաջանաներուն շուրջ. — Բաց-հարցարան
Նայուածքդ, Տէ՛ր
Տ. Մուշեղ Եպիսկ. եւ Ամբրիկայերը
ՅՈՒԼԻՈՍ ԵՒ ՊԱՄՓԻԼԻՈՍ. — Առաջին Քրիստոնեա-
ներու Ժամանակուան պատմութիւն (Շար.)
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Պաշտօնական յայտարարու-
թիւն Կիլիկիոյ Կաթողիկոսարանին
Հարստահարութեանց խնդիրը Ազգ. Ժողովին առջեւ
Շաբաթուան կարգեւոր լուրերը

ԳՐԻԳՈՐԻՍ
ԳՆԷԼ Մ. Վ. ԳԱԼԷՄԲԱՐԵԱՆ
ՍՈՒՐԷՆ Մ. Վ. ԳԱԼԷՄԲԱՆ
ՄԱՆՈՒԿ ԴԱՆԻԷԼԵԱՆ
ՆԵՐՍԷՍ ԵՊ. ՍՍԱԿԱՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ
ԳԻԻՏ Մ. Վ.
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՏԱԶԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիկթաշ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمي كليسا سنده «داجار» غنقهسى مديرى پاپاس زارماير افندي
Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ և Գաւառաց՝ տարեկան	40 դրու
Արսասահմանի համար	» 10 ֆրանկ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ լաժանորդ զամբողջ իրաւունք ունի մէկ թերթ ձգիստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԻՒԿ ԵՆ
ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բէնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բէնյ. Դա-
րիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պօ.
զոս Վրդ. Դափթանյեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեգին Բէնյ. Պողար-
եան
ԱՖԻՕՆ ԳԱՐԱՀԻՍՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բէնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԴԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.
Կիւլէսէրեան
ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բէնյ. Սար-
գիսեան
ԵՕՁԱՍ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.
Դիմաքսեան
ԵՐՁՆԿԱ. — Տ. Մեսրոպ Բէնյ. Թորոսեան
ՁՄԻԻՌՆԻԱ. — Տ. Յարութիւն Բէնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Դաւուստ քնյ. Տ.
Դալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջն. Փոխանորդ Տ. Ներսէս
Ա. քնյ. Վահանեան
ԿԻՐԱՍՈՆ. — Սրապիոն քնյ. Այլաեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հայեակ Բէնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐՁՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ռուբէն Բէնյ. Պիպիեան
Շ. ԴԱՐԱՀԻՍՍԱՐ. — Տ. Նաթան Բէնյ. Տա-
տեան
ՈՒՇԱՔ. — Յարութիւն քնյ. Աստարազեան
ՊԱՆՏՐԱՍ. — ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարսապետ Եպիսկ. Մաղլըմեան
ՊԱՂՏԱՍ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բէնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՈ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Ապանեան
ՍԵԲԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէօփիլէ Բէնյ. Օտապաչեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բէնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բէնյ. Տրէզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՓԱՐԻՁ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պետ Բէնյ. Քիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖՐԷՁՆՈ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 17 ՍԵՄՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 36

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԶԱՐԻՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

«Խորտակեաց Տէր զցուպ ամսարշտացն,
զգաւագան իշխանացն» : (Նս. ԺԴ. 5 :)

(Վաղուսն ձաշու. Գիրքէն)

Կայծակնամարտը մարդարէն անգամ
մըն ալ պրկած էր իր քնարին թիկերը՝
յոյսի երդ մը երգելու համար Յակոբի տա-
նը ու Խորայէի մնացորդներուն . հեռա-
ւոր հայրենիքին կարօտը նորէն կ'արթն-
ցնէր անոնց ստոապեալ հողիներուն մէջ,
ու հին փառքերու յիշատակներուն թեւ
կուտար անոնց սիրտերուն մէջ . Յակոբի
Տունը քանդուած , ու Խորայէլ գերու-
թեան դառն բաժակը խմած էր . բայց ա'լ
Տէրը պիտի սղորմէր անոնց վրայ, ու զա-
նոնք «իրենց երկրին վրայ պիտի հանգըս-
տացնէր» . Թշնամին ժառանգութիւն պիտի
ըլլար Խորայէլի՝ իբրեւ ծառաներ եւ ազա-
խիներ, ու գերեզմաններ իրենց գերի պի-
տի ըլլային . Եւ երբ Տէրը Խորայէլը իր
գերութեան տունին աշխատանքէն հան-
զըստացնէր եւ տանջանքներէն ազատէր,
ան բոլորովին զարմացած սա առակը պի-
տի ըսէր Բաբելոնի թողաւորին համար .
«Ի՛նչպէս զաղարեցաւ բռնութիւն ընողը,
Ի՛նչպէս զաղարեցաւ հարկապահանջ քա-

ղաքը : Տէրը ամբարիշտներուն գաւաղանը
եւ իշխողներուն ցուպը կոտրեց» :

Մարդարէին այս խօսքերէն կը տեսնենք.
Նախ՝ Չարին ու չարիքին գոյութիւնը :
Որչափ ալ մութ գաղտնիք մը ըլլայ չարին
ու չարիքին ծագումը մեզի համար , ցա-
ւալի իրողութիւն մըն է անոր գոյութիւ-
նը : Հոգ չէ թէ չգիտնանք մեղքին ծնուն-
դը, բայց չսա ազէկ զգացած ենք ու գի-
տենք անոր գործած աւերներն աշխարհիս
վրայ : Թէեւ ընկերաբանը իբրեւ աննը-
պատտ միջավայրի արդիւնք , մարդաբանը
բարեշրջութեան նախնական աստիճաննե-
րուն վրայ մարդուս մէջ իշխող կենդանա-
կան բնազդներու իբրեւ մնացորդ , աստ-
ուածաբանը իբրեւ չար ոգիներու սաղ-
րանք կը մեկնեն ու կը ներկայացնեն
զայն , բայց անոր իսկութեան կամ ծա-
գումին մասին այս սարբեր կարծիքները
կը համեմատեն անոր գոյութեան ու ար-
դիւնքին վրայ : Հետեւաբար ան ազգերու
պատմութեան , բռնակալներու իշխանու-
թեան , ամբարիշտներու զօրութեան ու
չար մարդերու սիրտերուն ու գործերուն
մէջ կը զգացնէ իր ներկայութիւնը : Աշ-
խարհի վրայ որչափ ատեն որ Խորայէլ-
ներ ճնշուին բռնութեան հարուածներուն
տակ , որչափ ատեն որ անիրաւունք տի-
րապետին տէրներու վրայ , ու ապրին

անոնց արեան զինով, որչափ ատեն որ մարդիկ չկարենան իշխել իրենց ստորին կիրքերուն ու զազանային բնազդներուն, պիտի չզաղբին չարին ու չարիքին դէմ բարձրացած բողոքի աիքներ՝ անիրաւութիւններու ժայռերը մտրակելէ :

Երկրորդ՝ Չարին գործը : Չարիքին ու մեղքին աշխարհի վրայ գործած աւերները աւելի մօտէն դիտուել համար կը բաւէ պահ մը ախանջ տալ մեր ներքին պայքարին, զոր Պօղոս աստուծոյ աշխարհային կենդանի գոյնիւրով կը պատկերացնէ : Ամէնա ալ գիտենք թէ մեր մէջ կան չարի ու բարի երկու բանակներ, որ կը կռուին. ունինք երկու հակառակամարտ բաղձանքներու հոյւեր, որոնցմէ մէկ մասը արծիւի թեւեր կ'ըլլան մեզ դէպի երկինքներու բարձրութիւնները սաւառնեցնելու, իսկ ուրիշ մէկ մասը կապարեայ ծանրոցներ կ'ըլլան մեզ դէպի կիրքի ու մեղքի աղմուսները քաշելու : Ո՞վ կրնայ ուրանալ այս պայքարը, Բարիքի մը առթած երջանկութիւնը եւ անիրաւութեան մը պատճառած խղճի խայթը ո՞վ չէ զգացած իր սիրտին մէջ : Այս է նաեւ իրողութիւնը՝ աւելի ընդարձակ շրջանակի մը մէջ՝ աշխարհիս վրայ : Կայ բարի ձեռքը եւ չար ձեռքը, կան լացող աչքիկ ու արցունքը սրբող ձեռքեր, կան նաեւ այրիին ու որբին պատառը խլող ձեռքեր : Ի՞նչ են այս անիրաւութիւնները, բռնութիւնները, անարդարութիւնները, եթէ ոչ չարին գործը : Չարին գործը, այո՛, ահաւոր է ան. բխւաւոր հոգիներու մէջ մահ ու յուսահատութիւն սփռել, սիրոյ եւ եղբայրութեան տեղ կոխել ու թշնամութիւն սերմանել, աղգելուն խաղաղ զարգացումին ու բարօրութեան տեղ մեծ պատերազմներու աւերներն ու սարսափները բերել, փոխադարձ սիրոյ ու ծառայութեան տեղ ընտանեկան տեւական կռիւններ յառաջ բերել, վերջապէս եղեմ աշխարհ մը Սողոմ աշխարհ ընել՝ չարին գործն է, զոր դարմանելու համար ուրիշ սպեղանի մը չկայ՝ եթէ ոչ բարիին սպեղանին : Մինչ չարը իր գոյութիւնը իր գործերուն, իր մահա-սփիւռ արդիւնքներուն մէջ տեւակացնել

կը նկրտի, թէ՛ մարդկային հոգիին եւ թէ աշխարհի մէջ՝ ուրիշ հնարք մը չկայ, եթէ ոչ բարիին գեղթափը գործածել անոր դէմ, ճշմարտութեան, սիրոյ, գթութեան, հաւատքի ու սրբութեան ուժերով գտնւիլու, եւ խաղաղութեան եւ եղբայրութեան Աւետարանը աւետարանել աշխարհի վրայ :

Երրորդ՝ Չարին նախաստիճի : Բայց հոս է որ մարդարէին քնարը աւելի բարձր ու հոգեյոյզ կը թրթռայ : Չարը ճակատադրուած է կործանելու, «Տէրը ամբարիշտներուն գաւազանը եւ իշխողներուն ցուպը կոտրեց» : «Գաւազան» եւ «ցուպ» խորհրդանշան են զօրութեան եւ իշխանութեան, եւ այս իմաստով է որ Սաղմոսերգուն կ'ըսէ. «Յուպ քո եւ գաւազան նոքա մխիթարեսցեն զիս» : Հետեւաբար Տէրը չարին զօրութիւնն ու իշխանութիւնը կործանեց : Այս պատմական ճշմարտութիւն մըն է Իսրայէլի պատմութեան եւ աշխարհի պատմութեան մէջ, եւ նոյն այդ հզօր բաղուկը այսօր ալ չէ զաղքած չարին իշխանութիւնը հարուածելէ : Չարին թագաւորութիւնը յաւիտեանական չէ, ան վերջապէս պիտի ինչայ : Ան ինկած է շատ մը բռնապետութիւններու եւ անիրաւ իշխողներու անկումին մէջ, եւ անուղղակի կերպով ինկած է բարութեան, սիրոյ եւ ճշմարտութեան պանծացումին մէջ : Որչափ ատեն որ համաշխարհային խաղաղութեան եւ ընկերային ճշմարիտ բարեկարգութեան կարօտը զօրանայ մարդկային սիրտերու մէջ, պիտի սաքսի չարին գահին պատուանդանը, ու պիտի գերդին անոր իշխանութեան հիմերը : Հին զարեւու մարգարէներէն եւ տեսանողներէն մինչեւ հրէշտակային «եւ յ'րկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն» երգասացութիւնը, եւ անկէ մինչեւ հիմա նոյն այս յոյսն է որ կը տիրապետէ բարի հոգիներու մէջ : Չարը ճակատադրուած է պարտութեան ու կործանումի : Առանց այս յոյսին ու հաւատքին, ամենամեծ յիմարտութիւն մը պիտի չըլլային բարիին ձեռքը զօրացնելու համար վասնուտժ այսքան մեծ ջանքերն ու զո-

հողութիւններ : Ինչո՞ւ եկեղեցիներու , զպրոցներու , բարեգործական հաստատութիւններու եւ այն բաղմատեալ միջոցներու համար — որոնցմով կարելի է մար-

դիկը բարութեան թաղաւորութեան սահմաններուն մէջ բերել — պիտի ծախսուէին միլիոններ : Եթէ պահ մը դադրինք հաւատալէ թէ չարը ճակատագրուած է կործանելէ ու բարին միայն պիտի թագաւորէ աշխարհի վրայ , այն ատեն հողիներու վրայ պիտի իջնէ յաւիտեական , անարշաղոյս գիշեր մը , ու աշխարհ խակաս պէս պիտի կործանի :

Ուրեմն , հաւատացեալ ընթերցող , մի զարմանար ամբարիշտներուն խաբեպատիր ծաղկումին , անոնք պիտի չորնան . անոնք կը նմանին փոշիի զօր հովը կը ցրուէ : Պինդ փարէ այդ արտապնդող հաւատքիդ ու մեծ յոյսիդ : Այն որ Առկածեալ պատուոյդը չպիտի մարէ ու ջախջախեալ եղէ՝ գը չպիտի փչէ , «ամբարիշտներուն գաւազանը եւ իշխողներուն ցուպը կոտրեց» , ու միշտ պիտի կտորէ , մինչեւ որ զայ թաղաւորութիւնը Անոր , որ Հայրն է բոլոր բարեքներու :

ԳՐԻԳՈՐԻՍ

ՎՐԻՊԱԿ. — Տաճար թիւ՝ 34, էջ 538, տող 26. — «Մեր սիրաւորուն այրող բուրվառէն անուշ նորութեան խնկումներ» , պէտք է ըլլայ , «Անուշահոսութեան խնկումներ» :

ԿՐԾՆ. ԺՈՂՈՎԸ ԴՆԻ նիստին մէջ Կեդր. վարժարանի Կրօնի ուսուցիչ նշանակեց Գեր. Տ. Սահակ Ծ. Վ. Օտապաշեանը (Շնորհաւորութիւններ այս անուանման համար) : Ժողովը նոյն նիստին մէջ որոշեց Դարթալի Տ. Կրպտ. քն. Օհանեանը իր հայրենիքը զրկել , Արմաշու միաբան Տ. Յովհ. Վ. Մազեանը Պոլիս կանչել , իսկ նոյն միաբանութիւնէն Տ. Համադասպ Վ.Ր՝ որ առաջնորդական պաշտօնի խնդրանք ըրած էր՝ յարմար տեղ մը պաշտօնի կոչել. — Ժողովը Պատր. Փոխանորդ Տ. Ղեւոնդ Ծ. Վ.ին յանձնեց Սեբաստիոյ Պինկէօլ գիւղի քահանայայտելի քննութիւնը :

ՍԻՆԵԱՅ ԴՊՐՈՑԸ

Դ.(1)

ՎԱՐԴԱՊԵՏԱՆՈՑ ՍԻՆԵԱՅ

Սինեայ վարդապետանոցը՝ երանաշնորհ Թարգմանչաց ժամանակի զեղեցիկ ծնունդներէն մէկն է : Ս. Մեսրոպի աշակերտութիւնէն Սնանիա, որ Սինեայ եպիսկոպոս ձեռնադրուած էր Ս. Սահակ հայրապետէն , առաջին անգամ հաստատեց իր երկրին մէջ զպրոց մը , եւ իր աշակերտներէն Բենիամինի յանձնեց անոր տեսչութիւնը : Սնանիայի բացած այս կրթարանն անշուշտ կ'ընթանար այն ուղղութեամբ որ աւանդուած էր Ս. Սահակէն ու Ս. Մեսրոպէն , այնպէս որ քիչ ժամանակի մէջ Դպրոցը մեծ փայլ ու նախապատուութիւն ստացաւ , զոր եւ պաշտօնապէս հաստատեցին Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ. մեկնութեան եւ քաղաքանութեան հրամանը Սինեայ Դպրոցին միայն շնորհեալ : Այս առանձնաշնորհումն անտարաւոր իրեն շարժառիթ ունէր այն մեծ կարողութիւնն ու վստահութիւնը , զորս Սինեայ վարդապետանոցին արժէքը ներշնչած էր Հայ մտքի երկու անմահ Լուսաւորիչներուն . եւ այս վերջիններն արդարեւ խաբուած չէին բնաւ , վասն զի կը տեսնէին թէ Սինեայ Դպրոցին շնորհիւ պահուած եւ ճոխացած է Հայ Մատենադարանութեան աւանդն ու գանձը , եւ այս կրթական կեդրոնի աշակերտութիւնն արտաքին թեւադրանքէ այնքան չհրապուրուեցաւ , որքան յետ ժամանակի պիտի հրապուրուէին Արեւմտեան Դպրոցի վարդապետները , այլ իրենք իրենց մէջ ամփոփուած՝ ազգային ուսումնասիրութիւններու աւելի խորամուխ եղան սիրահարական խանդով մը : Սինեայ վարդապետանոցը նախ հաստատուեցաւ երկրին կեդրոնը Ծղուկ գաւառի Շաղատ գիւղաքաղաքում , ուր կը գտնուէին արդէն քաղաքական եւ կրօնական իշխանութեանց

(1) Շար. նախորդ թիւէն :

գահն ու աթոռը . բայց երբ թ. դարում Սիւնեաց եպիսկոպոսարանը փոխադրուեցաւ Տաթևու վանքը, միեւնոյն ատեն հոն փոխադրուեցաւ նաեւ Վարդապետանոցը, որ ըստ Օրբէլեանի «լի էր եւ ծովամասոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ճոխ էր եւ վարժարանն վարդապետական կրթութեամբ, նաեւ արհեստաւորք նկարչացն եւ գրողաց անհամեմատք»:

Թէ ո՞վ էին վերը յիշուած Անանիան ու Բենիամինը. հաւասարապէս այս երկու անձանց կեանքին վրայ չառ տեղեկութիւններ չեն հասած: Անանիայի անունը կը յիշուի Թարգմանչաց խումբին մէջ . չունի ո՛ր եւ է մասնաւոր երկասիրութիւն, կամ գոնէ մեզի չէ հասած: Մենքեամբ Սիւնեաց աշխարհէն է, քանի որ Կորիւն կ'ըսէ յայտնապէս թէ՝ Ս. Մեսրոպ այն տեղ գտնուած ատեն «մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս տեսուչս Եփեզեցւոյն Սիւնեաց կտրդէր, որոյ անունն կոչէր Անանիաս» (Կոր. 14): Ըստ ամենայն հաւանականութեան, Մեսրոպ երբ այդ երկրին մէջ առաջին անգամ սկսաւ Ս. եւ տարանը քարոզել, Անանիա աշակերտեցաւ եւ սորվեցաւ Թարգմանչութիւն, ապա իր վարժապետին հրամանով իրրեւ Ս. Գիրքը ժողովրդեան թարգմանող մնաց հոն, երբ անիկա կը դառնար Ս. Սահակի թով:

Իսկ զրեւու գիւտէն վերջ երանաչնորհ Վարդապետն երկրորդ անգամ նոյն աշխարհն երթալուն կը հաւաքէ «մանկունս առ ի նիւթ վարդապետութեան» (Կոր. 14), եւ Անանիա իսկոյն կը բանայ վարժարան մը եւ «սիութապէս զամենեւեան ուսոյց հայերէն դպրութեամբ եւ արար զիտոզն աստուածային կտակարանաց» (Օրբ. էջ 96):

Անանիա իր հետն առնելով Բենիամինը, գնաց նաեւ Աղուանից երկիրը, ուր կը գտնուէր Ս. Մեսրոպ. եւ միասին անոնց զրեւր հնարեցին. ապա հոն թողնելով Բենիամինը, ինքը Անանիա դարձաւ իր աշխարհը Աղուանից թագաւորն Եսլաղէն ի նշան երախտագիտութեան կը շնորհէ Սիւնեաց եպիսկոպոսին «զիւր նշանակն թա-

գաւորական ոսկէսուան վառիւ եւ ի զըլուխն գունտ ոսկի եւ ի վերայ խաչ պատուական» (Օրբ. 97), եւ կը հրամայէ զայն միշտ իր հետը տանիլ:

Անանիայի անունը յիշուած է նաեւ Արտաշատու ժողովին եպիսկոպոսներու ցանկին մէջ. ներկայ եղած է Շահապիւ վանու ժողովին եւս. Վերջապէս քսան երկու տարի Սիւնեաց Աթոռին վրայ մը նալէ յետոյ, Անանիա եպիսկոպոս կը վախճանի խաղաղութեամբ:

Իսկ Բենիամին ընկէ Աղուան կ'երեւի եւ աշակերտած Ս. Մեսրոպայ. զի Կորիւն կ'ըսէ. «Յայնմ ժամանակի եկեալ զիպէր նմա (Մեսրոպայ) այր մի երկց աղուան ազգով, Բենիամին անուն, եւ նորա հարցեալ եւ քննեալ զբարբարոս բանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանադիրս» (Կոր. 18): Բենիամին արժանաւոր գործակիցն եղաւ Անանիայի, իր կրթանուէր ջանքովն եւ անխոնջ աշխատութեամբ, մինչեւ անգամ տեսուչ կարգուեցաւ վարժաւանին:

Թէ՛ Անանիայի եւ թէ՛ Բենիամինի կեանքին վրայ աւելի տեղեկութիւն մը չկայ Պատմութեան . սա՛ միայն բացաքձակապէս յայտնի է թէ Սիւնեաց աշխարհի ուսման եւ կրթութեան գործին անդրանիկ ժիր մշակներն հանդիսացան անոնք:

Սիւնեաց Վարդապետանոցի սկզբնաւորութիւնը Ս. Դարու առաջին կիսուն դնելով, ինքնին հարցում մը կը ծնի թէ ինչո՞ւ մինչեւ Զ. դարու սկիզբն ո՛ր եւ է ուսումնական անձնաւորութիւն չէ յիշուած իբր աշակերտ այդ զարոյցին. արդեօք Անանիայի եւ Բենիամինի կրթական աշխատութիւններն ասորդիւն մնացին կամ անոնց մահուամբ խափանուեցաւ գործը. կը պատասխանենք. կարելի չէ ընդունիլ թէ այդ կրթանուէր Զոգին հետ Կրթարանին կեանքը վերջ գտած ըլլայ, որովհետեւ երկրորդ սկզբնաւորութիւն մը երբեք չյիշեր Սիւնեաց պատմիչը, երբ մահաւանդ կը ներկայացնէ մեզի նոյն Դարոցէն Պետրոս Քերթովը՝ իբրեւ հոռւ անձ մը: Ըստ մեզ հաւանական կ'երեւի որ քաղաքական չփոթ ու անկերպարան

վիճակն ստիպած ըլլայ վարժարանին աշակերտութեան՝ թաքստեայ մնալ ա՛յս կամ այն տեղ, ուր եւ եթ պիտի կրնային զերծանիլ օտարին աղիտաբեր սպառնալիքներէն(°) :

Անանիա եպիսկոպոսի յաջորդները Նան, Գաղատ, Մուշէ, Երիցակ եւ Մակար, որոնք ամբողջ իննսուն տարուան ժամանակամիջոց մը կը զբաւեն Սիւնեաց Աթոռին վրայ, ընդհանրապէս խստակրօն սրբաւիցեութեան մը հետամտած են, մանաւանդ Երիցակն որ խարաղնազդիստ ճրգնաւոր մ'էր: Վերջապէս Զ. դարէն կը սկսին հետզհետէ երևիլ Հայաստանի գլխաւոր ուսումնական վայր Սիւնեաց վարդապետանոցի աշակերտ եկեղեցականները, որոնց իւրաքանչիւրին վրայ պատմական, կրօնական, մատենագրական տեսակէտներով ու քննական մաքով խօսելն կը կարօտի մասնաւոր ուսումնասիրութեան:

ԳՆԵԼ Ծ. Վ. ԳԱԼԵՄԲԵՍՐԵԱՆ
Դասը-գիւղ

ՈՐԲՈՒԿՆԵՐՈՒ ԱՐՅՈՒՆՔԸ

Արդէն խաւարը պատած էր ամէն կողմ, երբ կառավարական պաշտօնատուէն վերադարձայ: Խոյթի ոճրագործներուն նախնական քննութիւնը պիտի կատարուէր այդ օրը. այս առթիւ իմ եւ կուսակույդէին միջեւ նախապէս որոշուած ժամադրութեան մը համաձայն, անպայման իր մօտ պէտք է գտնուէի: Հազոր պէյի յուսադրելու քաջալերական խօսքերէն սրտապնդուած, սպասեցի մոզովին վերջաւորման, որ միեւնոյն յարկին տակ մասնաւոր սենեակի մը մէջ առանձին դուռ մարուած էր:

(°) Պէտք է նկատի առնուլ թէ զրական զարգացումն ալ կը դադրի, հոն ուր բնաւ պակաս չեն աղետալից դէպքեր, որոնք երկիրն յետին Ոշուաւումեան կը մասնեն: Կրօնական եւ քաղաքական զոյն ունեցող հալածանաց ժամանակ ինչպէս պա. հանչենք որ ուսումնական բարգաւաճումն ըլլայ ըստ ամենայնի:

Եւ ահա տասնեակ մը մարդասպան բանտարկեալներ՝ ոստիկան-զինուորներէ շրջապատուած՝ կ'անցնին մեր առջեւ: Պատուհանէն կը դիտենք զանոնք երկուքս ալ: Դժոխայի՛ն գաղաններ, մարդկութեան ո՛չ մէկ հետք կը նշմարուի իրենց վրայ, վայրագ արարածներ, որոնց աչքերէն հեռու կրակ կը ցայտէ. արիւնաբոս ճիւղներ, որ իրենց ամբողջ շարժումներով, յօշոտելու անյագ տենչը կը ցուցադրեն:

Անկարելի եղաւ զսպել ինքզինքս. բարկութենէս եւ յուզումէս, ու մզնակի բարախել սկսաւ սիրտս. նուազումի վայրկեանները մօտալուտ էին: Իսկ կուսակալը քոյս ի վեր կանգնած, ի տես իմ արգարացի բարկութեան ու դերագրգիւ վիճակին, ինքնայատուկ քաղցր շեշտով մը ոճրագործներուն հանդէպ արդարութիւնը լիովին գործադրելու խոստումներ կը շրջալէ ինձ . . . :

Հանգարտիլ անհնար էր, չէի կրնար սպասել այլ եւս. այդ դժոխային արարածներու շարքին անցքը զրեթէ ընկճած, լնցողցած էր զիս, պէտք էր վերադառնալ, եւ արդէն պահանջուած թուղթերու ծրարը յանձնուած էր ինձ:

Դուրս ելայ իսկոյնս Լո՛ւս, քարացած լոռիքին մը ամէն կողմ: Բնազդաբար վեր առի աչքերս դէպի երկինք, լուսինը փրնտուելու համար արդիօք. . . ա՛յն ալ վիշտերուս մասնակից կը թուէր. ազգիս դաւաւոր տառապանքներուն անհնատես այդ յաւիտեական վիճակն, ամպերու թանձր կոյտերու հոտին պահուելու, բաներ մը կը խօսէր ինձի կարծես, տխուր, տրտմ. . . :

Գէշ նախազգացումներով արթնցած էի այդ օր. մտային ու հոգեկան տաքնասպնդանայութիւնով էի զիս: Ոճրագործներու վտնակին այդ տեսքը, մանաւանդ, աւելի տակն ու վրայ ըրաւ զիս: Երբ Առաջնորդարան վերադարձայ, զգացուցին ինձ նկուռ վիճակս եւ «մեռելի դոյն ստանալս» . . . :

Դիտակից էի կացութեանս, ջոնացի ինքնամիտփութիւլ, եւ արդէն հաղիւ կէս ժամ վերջ գրասեղանին գլուխը անցած, ուշադրութեամբ աչքէ կ'անցընէի թուղթերս: Մասամբ վերստացած կը կարծէի:

ոյժերս. բայց ո՛չ, ինծի համար բոլորովին աննախընթաց էր այս հողեկան ու ֆիզի-
զական պարտաւորումը: Հանդիսաւի պէտք
զգացի՝ թուղթերու մնացած մասը հեռու-
եալ օրուան թողլով, մանաւանդ որ դի-
շերն ալ չա՛տ յառաջացած էր:

Ա՛հ, մահաբո՛յր դիշեր... էութիւնս
քայքայելու աստիճան զօրաւոր մղձա-
ւանջ... տամիացած աչքերուս վրայ ան-
կարելի եղաւ քուն գալ: Եւայ դարձեալ,
թուղթերուս ամբողջական քննութիւնը
անհրաժեշտ էր, որոշ եղբակացութեան
մը գալու համար. եւ լամբարին լոյսով
անցայ զրասեղանիս առջեւ: Սպաննուած-
ներու մարմնոյն յօշոտման մանրամասն տե-
ղեկագիրը հազիւ լրացուցած էի, երբ Ա-
ռաքնորդարանի դռները սկսան բանալ,
որովհետեւ արշալոյս էր այլ եւս...

Արեւնո՛տ արշալոյս:

Չարաշուք զուգագիպութիւններու եր-
կիր մը կը թուի սա՛ Հայաստանը, ախոր
կանխադասութեամբ իրականացման վայր
մըն է կարծես սա՛ արցունքի գաւառը:

Տխուր նախազգացումներուս իրակա-
նացման նախակտրուպիս հանդիսացած էր
արեւնոտ արշալոյսը... Դուրսէն հեծ-
կատուքի ձայներ կ'արձագանգեն ական-
ջիս. վեր ցատկեցի իսկոյն, ուղեցի իմա-
նալ դուրսի անցու դարձը: Եւ ահա ներս
առաջնորդուեցաւ տմբողջ ընտանիք մը՝
մայր, քոյր եւ երկու անչափահաս զա-
ւակներ:

Պաշտօնասեղիս հասնելէս ի վեր հո-
գային խնդրոյ առթիւ ողջակիզուած ին-
ներորդ հայուն՝ Տասիկ գաւառի Պաս դի-
դի դեռ նոր սպաննուած Ռէտ Կանչօի կիներ
եւ որբուկներն էին անոնք: Արցունքոտ
աչքերով նայեցայ այդ դժբախտ հոգիներ-
րուն. հողեկսկիծ ակնարկով նայեցայ ատ
«զալըմի» ու «զուլումի» սեւ սպառնաքին
մէջ փաթաթուած ֆեւմբախ ընտանիքին,
խոցոտուած սրտով լսեցի իրենց բողոքն
ու ողբը: Կսկծեցուցի՛ւ պատկեր. ընտանիք
մը ամբողջ, որոնք գրեթէ խելապար, լա-
լէն աչքերնին ուռած, գէմբերնին թախ-
ծոտ ու տխուր, մաղերնին ցրքուն ու ան-
խնամ, իրենց ազգին սեւ ճակատագիրն

եղող վիշտին ծանրութեան տակ ընկ-
նուած, ու իրենց միակ ապաւէնը եղող
դժբախտ Կանչօի հեա ողջ ողջ մեռած ու
մրկուած, հատած ու լմնցած...

Հապա սա՛ երկու փոքրիկները, ճի-
տերինն ծուռ, իրենց մօր քղանցքին
կառչած, մե՛յիլ մե՛յիլ աչքերուս մէջ կը
դիտեն: Անուշիկ դիմագիծերնուն յարա-
շարժութենէն կը զգամ իրենց հոգեկան
ներքին տագնապը, եւ դիտեմ թէ լսան մը
կը պահանջեն ինէ...

Ասո՛նց մեղքն ի՛նչ էր, այս որբ ձա-
գուկներն ինչու այսքան կանուխ ըմպէին
տառապանքի դառն բաժակը:

Եւ սակայն անգութ փեշկը հարուա-
ծած, ջախջախած, լմնացած էր այդ ան-
տէր եալրուները. իրենց մօր սպառնու-
թենէն յայտնի էր թէ, առաջին հարուածով
զգեսնած, անչնչացուցած էին իրենց հայ-
րը, եւ այդ կերպով մարա՛ծ անոր օճախը:
Չկրցի զոպիւ արցունքներուս պոթկացու-
մը, եւ յուզումս անշնամարիկ ընելու նպա-
տակաւ՝ ծովացած աչքերս ուղեցի զէպի
պատուհանէն դուրս: Ինծի համար անհնար
էր դիմանալ. քարացած սիրտ, ժայռացած
խիղճ, վերջապէս զգացումէ բոլորովին
զո՛ւրկ ըլլալու էր մարդ, սա՛ մշտաչար-
չար ժողովուրդին անթիւ ու աննկարու-
գրելի վիշտերուն հանդէպ անսարքեր մնա-
լու համար:

Մինչեւ այդ ատեն երկու որբուկները
կը դիտէին միայն: Իմ մէկ հարցումին
վրայ, մայրերնին պէտք եղած պատաս-
խանը տալէ վերջ. «Ա՛հ, Կանչօի ֆեւմ-
բախ եւ անդիտի եալրուներ, երբանի, ա՛յ
ձեզի հետ չկայ». հազիւ այս բառերը ար-
տասանած էր, օ՛Ֆ, ան ի՛նչ վայնասուն
էր որ փրցուցին այդ երկու փոքրիկները,
ան ի՛նչ սիրտ խշիշտցնող ճիչ էր որ ար-
ձակեցին այդ երկու հայրազուրկ եալրու-
ները: Կ'երեւի, ընդհանուր տխուր խօսակ-
ցութիւնը ու իրենց հօր անուան բաղմիցս
յեղ յիզումը փղծկեցուց զիրենք: Ա՛հ, ան
ի՛նչ արցունքի կաթիլներ էր որ կը հոսէր
իրենց գառնուկի անմեղ աչքերէն, ան ի՛նչ
փառում էր իրենց մօր վիզին, ան ի՛նչ
պաղատալից նայուածք՝ ուղղուած ինծի...

Լինցած էի, կարծես այդ երկու փոքրիկները իրենց նոստիկ թաթիկներուն մէջ առած արիւնաքամ ընկուռ աստիճան կը ձմէին արդէն վերաւոր սիրտս...

Այդ անմեղուկ աչքերէն հոսող արցունքը յաւիտեանական բողոք մըն է քաղաքակիրթ մարդկութեան դէմ, որուն սաստկութեան առջեւ պէտք է սահմակի այլեւս։ Այդ աղբերացող արցունքը՝ հոգեցունց աղերս մըն է Օսմ. Դաշլիճին մատուցուած, որուն ականջալուր պէտք է ըլլայ այլեւս։ Այդ լճացած արցունքը՝ պաղասագին կոչ մըն է Օսմ. Երեսփոխանութեան ուղղուած, որուն պէտք է անսայ այլեւս։ Այդ տղի արցունքը կեանքէր արժող խնդիր մըն է՝ Պատրիարքարանի ներկայացուած, որուն լուծումը պէտք է փութացնէ այլ եւս։ Որբուկներու այդ արցունքը հծծիւն մը, ճիշդ մը, բողոք մըն է երկինքին դէմ, ուր դահաւաղող Աստուածը պէտք է... այլ եւս...

Որբուկներու արցունք... Ի՞նչ սրտածակիկ պատմութիւններ կը պարփակուին կաթիլներուդ մէջ...

ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԷՄԵԱՆ

Բաղեշ



ՔԱՅԱՆԱՆԵՐՈՒՆ ԶՈՒՐԶԼ

ԲՍՅ-ՀԱՐՑԱՐԱՆ

Ներդրոցի Պատկ. Արժ. Ժողովին եւ «Տաճար»-ի խմբագրութեան:

Հայաստանի խորերը ցաւերով եւ արիւն-արցունքով իր օրական հացը ճարող ժողովուրդ մը կայ, որ տակաւին կ'ապրի իր պապենական մաքուր հաւատքով եւ կրօնական ջերմեանդ սիրով։ Եւ սակայն չինական աշխարհին մէջ կան եւ կը զրուհուին զիմաքաւէրներ, կրօնի անարժան պաշտօնեաներ, որոնք իրենց զեղծարար ընթացքով, եւ աննկրկ յանցանքով գայթակղութեան պատճառ կը դառնան չինական այս հաւատաւոր ժողովուրդին, կը պղտորին անոր մաքուր հաւատքը եւ կրօնական զգացումները, ու այսպէս կը պա-

ղեցնեն զայն Եկեղեցիէն ալ եւ եկեղեցական սրբութիւններէն ալ։

Այս սխտուր պարագաները կը թելադրեն զիս հրապարակային քանի մը հարցումներ ընկուռ կրօն. Ժողովի Պատ. Հայրերուն եւ «Տաճար»-ի յարգելի խմբագրութեան, կը յուսամ եւ մանաւանդ վստահ եմ որ, գոհացումներ պիտի տրուին մեր այս անկեղծ փափաքին, նոյնպէս հրապարակաւ եւ «Տաճար»-ի միջոցաւ։ Տրուելիք հրատարակային լուսաբանութիւնները շատերուն համար ալ օգտակար պիտի կրնան ըլլալ։

1.— Երբ մարդ մը, առանց որ եւ է ժողովուրդի մը հաւանութեան եւ խնդրանքին, ինք իր գլխուն կեղծ եւ չինծու հանրադրութիւններ կը պատրաստէ եւ քահանայ կը ձեռնադրուի՝ Ազգի ալ, Եկեղեցին ալ եւ ձեռնադրող Եպիսկոպոսն ալ խաբելով, իրապէս կրնայ քահանայ կոչուիլ։ Ժողովուրդը պէտք է եւ պարտաւոր եւ զինքը իբրեւ օրինաւոր քահանայ ընդունիլ եւ յարգել։ Եթէ այո՞, ի՞նչ ապացոյցներով եւ օրինական փաստերով. իսկ եթէ ոչ, ուրեմն ի՞նչ ընել պէտք է այս տեսակ խաբեքայի մը Բռնութեամբ եւ խաբեքայութեամբ կատարուած պատկերները չեղեալ եւ լուծեալ կը համարուին, սակայն խարդախութեամբ ձեռք բերուած քահանայութեան ի՞նչ ընելու է։

2.— Գաւառական չըջանականերուն մէջ, Բուրդերը յաճախ սովորութիւն ունին էրկով կիներ առեւանգել, եւ երբ առեւանգուած քուրդ կնոջ նախկին էրկը իր կինը չուզէ արձակել որ եւ է փոխարինութեամբ, առջի «նիքեան»ը «նիքեան» մնալով, երկրորդ մըն ալ չի կատարուիր, մինչեւ որ առաջին «նիքեան»ը չըջուի։ Այս պարագային, առեւանգողները Հայ քահանայի մը զիմելով, առեւանգուած քուրդ կինը մկրտել կուտան, կը հայացնեն։ Այսպէս. նազի մեզմեկ ընկելով նախկին «նիքեան»ը կը ջնջուի, եւ այդ կինը կրկին քրդացնելով՝ երկրորդ անգամ «նիքեան» ընել կուտան առեւանգողին վրայ։

Ա՛րդ, քահանայ մը, երբ այս նպատա-

կով, դրամի եւ չահու համար, առեւանգուած քուրդ կիներ կը մկրտէ եւ կրկին քրդացնել կուտայ, կրօնքը եւ կրօնական սրբութիւնները պործիք եւ խաղալիք դարձնելով քրդական վաւաշոտ կիրքերուն, ի՞նչ ընել պէտք է: Հայրապետադիր օրէնքներով՝ ներկի չէ սրբալոյս Միւռոնը նոյն իսկ մարմնական բռնկութեան գործածել. ուրեմն ի՞նչ ընել հարկ է քահանայի մը, երբ այս տեսակ աղաւաղութիւններու եւ լպիրշ նպատակներու կը գործածէ սրբալոյս Միւռոնը: Այս տեսակ զիժ տէրտէրներուն համար օրինական ի՞նչ պատիժներ կան:

3.— Տակաւին երիտասարդ, այրիացեալ քահաներուն ներելի՞ է ժողովուրդին մէջ մնալ եւ քահանայադործել:

4.— Կրօն. ժողովներէ եւ Եպիսկոսէ դատապարտուած, փիլանազրկութեան ենթարկուած քահանայ մը կրնայ քահանայագործել, ինքնուրոյն կատարել աւակաւին իր դատապարտութեան պայմանաժամը չաւարտած: Եւ երբ Եպիսկոպոսին, Կրօն. ժողովներուն արդար եւ իրաւացի որոշումներուն չանսայ եւ չհնազանդի քահանայ մը, ի՞նչ ընել հարկ է իրեն օրինական տեսակէտով:

5.— Երբ քահանայ մը կը զաւաճանէ իր Եկեղեցին ու Եկեղեցականները, երբ քահանայ մը կը մասնէ իր ազգն ու ազգակիցները, պէ՞տք է զինքը ընդունիլ իբրեւ կրօնի պաշտօնեայ:

6.— Ի՞նչ ընել հարկ է այն քահանային, որ տեղեկներուն ապստամբութիւն, անէծք մը, կատարեալ փորձանք մը կը զաւանդէ Ազգին եւ ժողովուրդին դրութեան:

7.— Ի՞նչ պէտք է ընել այն քահանային, որ փոխանակ իր քահանայական գործերով պարապելու, կախարդութեամբ, վհուկութեամբ եւ քողոյք ընելով իր ժամանակը կ'անցնէ: Եկեղեցական օրէնքները, հայրապետական կանոնները կախարդ եւ քողոյք բացող կղերներուն համար ի՞նչ տեսակ պատիժներ որոշած են:

Կը սպասենք սոյն հարցումներու հրապարակային լուսաբանութեանը:

ՄԱՆՈՒԿ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Ֆարդին

Խմբագրութիւն «Տաճար», ի

Յարգելի յօդուածագրին հարցումներուն մէջ, մանաւանդ հարցնելու եղանակին մէջ իսկ կը գտնենք պատասխանը: Ի բաց առեալ երրորդ հարցումը, —այրիացեալ երիտասարդ քահանաներու ժողովրդեան մէջ մնալու եւ քահանայագործելու խնդիրը, —որ շատ կարեւոր փափակ հարց մ'է եւ հապճեպ, յախուռն վճիռով մը չի կրնար լուծուիլ՝ առանց խղճահարութիւն առնելու, մնացեալ բոլոր հարցումներուն միակ պատասխան մը կրնանք տալ:

Եւ այդ պատասխանը սա է թէ այդ արարքներէն ու եւ մէկուն մէջ գտնուող քահանան անպայման դատապարտելի եւ Ո՛չ, կարելի չէ Եկեղեցւոյ պաշտօնեայ ճանչնալ այն քահանան որ զրամի սիրոյն եկեղեցւոյ նուիրականութիւնները կը սրբապղծէ, որ Ազգին ու Եկեղեցիին դէմ կը դառնայ, որ տեղեկներուն կրթնած՝ ժողովուրդը կը կեղեքէ, եւ վերջապէս կը զանուի վերոյիշեալ հարցումներով յիշուած արարքներուն մէջ: Ժողովուրդը կատարելապէս իր իրաւունքին մէջ է՝ այդ կարգի եկեղեցականներուն դէմ ազգու բողոքի ձայն թարգմանելով: Ժողովուրդը իր իրաւունքին մէջ է, մանաւանդ, զեղծանող եկեղեցականին զլանալով այն յարգանքը, որով գիտենք թէ, մանաւանդ զաւանդ մէջ, կը չըջապատուի Հայ հոգեւորականը, զլանալով ժամնաւորապէս այն նիւթական օժանդակութիւնը, որով միայն կրնայ քահանան ապրիլ ու ապրեցնել իրենները: Ժողովուրդը շատ միջոցներ ունի զեղծանող, անպարտաճանաչ եկեղեցականը ուղղութեան բերելու: Երբ ու եւ Պատրիարք անդամ պաշտօնանկ ընելու փարոզ կ'ըլլայ իր «չյիշուի» աղաղակով, որքան սուղի զիւղական տէրտէր մը, որ վերջապէս իր չըջանալի մտաւորական մակարդակէն աւելի բարձր վիճակի մէջ չի գտնուիր: Այդ

միջոցներէն՝ վերջինը պէտք է ըլլայ իր բողոքի ձայնը՝ օրինական ճամբով հասցուած պաշտօնական մարմիններու, այն է գաւառալին կեդրոններու . կամ բուն իսկ մայրաքաղաքի հոգեւոր իշխանութեան, որ մանրակրկիտ ու խզճամիտ քննութիւնէ մը ետքը, երբ համոզում գոյացնէ՝ ենթակային յանցապարտութեան, կարելի է վճատահ ըլլայ թէ յուսացուածէն չաա աւելի խրատ պիտի գտնուի, եկեղեցականութիւնը մաքրագործելու համար իր ցեցերէն, զինքն անպատուող աղոթատութիւններէն : Միայն թէ պէտք է ուշադիր ըլլալ այդ բողոքը արդարացի հիմերու վրայ հաստատելու : Դիւրին է չարտօսել , գիւրին է ամբաստանել՝ մանաւանդ հոգեւորականը . բայց ամբողջին առաջը անցնողները պէտք է խզճամիտ գտնուին՝ քննելու որ եղած ամբաստանութիւնները մի գուցէ ճշմարտանման երեւոյթներու վրայ հաստատուած զրպարտութիւններ չըլլան :

Հետեւապէս, ամէն բանէ առաջ, գիտակցութիւնը պէտք է դնել ժողովուրդին նկարագրին մէջ, գիտակցութիւն իր պէտքերուն, գիտակցութիւն իր ըրածին : Առաջին առթիւ որ այդ գիտակցութեան տէր ըլլայ ժողովուրդը, քահանայի ընտրութեան ատեն այն աստիճան հոգածու պիտի գտնուի, որ այլեւս չափազանց հազուադէպ պիտի ըլլան բողոքի առիթ տուող հոգեւորականները :

Երաժշտական յանձնաժողովը, որ ժամանակէ մը ի վեր անուանական գոյութիւն մը միայն ունէր, Կրօն . Ժողովի Սեղա . Դի նիստին մէջ վերակազմուեցաւ՝ անդամ ընտրուելով Տ. Տ. Խորէն Յարութիւնեան, Արիստակէս Հիսարլեան, Աբրահամ Էպէկան եւ Զարմայր Կէպիւրեան քահանայները, եւ Լեւոն Զիլինկիրեան, Գրիգոր Մէհաբրեան, Գրիգոր Զուլհանեան եւ Երմոգ Գույումճեան էֆէնդը : Յանձնաժողովը որ պիտի գործէ Կրօն . Ժողովոյ կողմէ պատրաստուած հրահանգի մը համաձայն եւ ինք պիտի պատրաստէ իր ծրագիրը, առջի օրը (եջ .) նիստ գումարելու հրաւիրուած էր , բայց միմամասնութիւն չունենալով չկրցաւ իր գիւանը կազմել :

ՆԱՅՈՒԱԾՔԻ, ՏԵՐ

«Այլ եւ յիս եւ ես ի դժոխս»:

Նայուածքը, Տէր, ինձ դարձուր .
Ըլլամ զուարթ կամ տխուր,
Թէ ընկճէ զիս վիշտ մ'անլուր .
Նայուածքը, Տէր, ինձ դարձուր :

Թէ վշտակոծ իմ սրտին
Սուր սլաքներ մխրճին .
Պրկէ կեանքին զիս անուր՝
Նայուածքը, Տէր, ինձ դարձուր :

Թէ հոգւոյս մէջ մրկի
Խոկմանց ալիքն ամեցի,
Խոցոտեն սիրտս փուշեր սուր
Նայուածքը, Տէր, ինձ դարձուր :

Թէ բռնութեան բիրտ ճիրան
Զիս քարշէ դէպ կախաղան .
Տեղան գլխուս գնտակ, սուր ,
Նայուածքը, Տէր, ինձ դարձուր :

Թէ աշխարհն ալ ինձ համար
Մարէ քաջերն իր պայծառ ,
Մահուան ծոցը սեւ , ցուրտ, լուռ,
Նայուածքը, Տէր, ինձ դարձուր :

Նայուածքը ինձ դարձուր, Տէր,
Մահը կեանք է վիշտն ալ սէր,
Դժոխքն իսկ ինձ համար,
Երջանկութեան, դառնայ վայր :
ՆԵՐՍԷՍ ԵՊՍԿ. ՍՍԱԿԱՆ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՒ ԱՄԵՐԻԿԱԶԱՅԵՐԸ

Պոստոնի Ազգ թերթին մէջ հրատարակուած անուանք պատճէնը համակի մը զոր Կիլիկիոյ Շնորհադարձ Տ. Սահակ Ս . Կաթողիկոսն ուղղած է Ս. Էջմիածնի Կաթող . Տեղակալ Սուրէնեանց Արքեպիս Ահա այդ համակը .—

17 Յուլիս 1911, Եողղատ
Հաւար 3428/198

Ամեն. Տ. Դեորդ Ս. Արքեպ. Սուրհենեանց
Տեղակալ Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ
Ի Ս. Էջմիածին

Ամերիկայոց Կեդր. Վարչութիւնը Թիւ 2 Եւ

Յունիս 16 ամսամբում կը զրէ մեզ, որ դժբաղդ Ատանայի տարագիր Առաջնորդը, Գեր. Մուշեղ եպ. Սերոբէան, իբրեւ հիւր Ամերիկա կը զանուի:

Եպիսկոպոսին ներկայութիւնը մխթարութիւն մը ըլլալով Ամերիկայի հայրենակարօտ Հայաւթեան, Երեսփ. Ժողովը նուիրագործելով ամէն կողմէ արտայայտուած փափաքը, մանաւանդ նկատելով որ արդի պարագայից մէջ Եպիսկոպոսին վերադարձը ի Կիլիկիա զերծ չէ դժուարութիւններէ եւ վտանգներէ, Առաջնորդ ընտրած է Ն. Սրբազնութիւնը:

Ամերիկահայ Կեդր. Վարչութիւնը նկատելով որ Մայր Աթոռոյ Թափուր կացութեան հետեւանօք ընտրութեան վաւերացումը կրնայ յապաղումներու են՝ թարկուել, եւ միւս կողմէն չ'ուզելով զաղծականութիւնը զրկուած Թողուլ Մուշեղ Եպիս.ի հայրական եւ հոգեւոր խնամքներէն եւ խրատներէն, Սահմանադրութեան 42րդ յօդուածի տրամադրութեան համաձայն Առաջն. Տեղապահ կարգած է:

Չայս ծանուցանելով մեզ, կը խնդրեն ժամանակ մըն ալ Ամերիկա մնալու համար արտօնել Մուշեղ Եպիսկոպոսը եւ ծանուցանել Ձեր Սրբազնութեան:

Յուսալով որ անարգարութեան հալածական եպիսկոպոս մը՝ Ս. Էջմիածին իբրեւ Մայր Ընդհ. Հայ հոգեւորականութեան չափտի մերժէ հովանաւորել. բաւականութիւն տալով Ամերիկայի Հայոց զոյգն խնդրոյն,

Եղբայրական Սիրազեղ Ողջունել

Մ Եւամբ սոցորակից

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՍ

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին այս նամակ կը ցոլացուին է Ամերիկահայ պատուական գաղութին ջերմ փափաքին՝ իրենց մէջ ունենալու Տ. Մուշեղ Եպ. թէ՛ Ազգի եւ թէ՛ ամերիկահայ ուրիշ թերթերու հրատարակութիւններէն կը տեսնենք թէ Ն. Սրբազնութիւնը ժողովրդականութիւնը ձեռք բերել յաջողած է Ամերիկայի ամէն կողմը ուր որ Հայ կայ, իր հիւթեղ քարոզներով ու բանաստեղծութիւններով եւ եռանդուն գործունէութեամբ, որ մասնաւորապէս ի յայտ կուգայ Հ. Բ. Ը. Միութեան նորանոր մասնաճիւղեր բանալով, եւ մանաւանդ իր հաւատքէն ուժացած ժողովուրդը մօտեցնելով իր դարաւոր ու նահատակ Ս. Եկեղեցիին: Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովը, եւ Ս. Էջմիածնի Կաթող. Տեղակալութիւնը անշուշտ իրենց բանաւոր պատճառներն ունէին հրաւիրելու զինքը՝ գաղտնալ Կիլիկիա, Սոսյ Շնորհ. Կաթողիկոսին իրաւասութեան տակ պաշտօնավարելու:

Եւ սակայն ժողովրդային իղձ մը, որուն արտայայտութիւնն է Տ. Սահակ Ս. Կաթողիկոսի վերոգրեալ նամակը, նոր երեւոյթ մը կուտայ խնդրոյն, եւ փափաքելի էր որ Ազգին հոգեւոր վերին իշխանութիւնը ի նկատ առնէր այս երեւոյթը, «գաւաթ մը ջուրի մէջ փոթորիկ» չյարուցանելու համար: Միւս կողմէ Տ. Մուշեղ Եպիսկոպոսի ու շրմութեան եւ ազգասիրութեան վրայ այնքան մեծ է մեր վերատաճութիւնը, որ չհնք յուսար թէ ինքը ուժ տայ Ամերիկահայ ուրիշ թերթի մը՝ Հայրենիք՝ արձանագրած զրոյցին թէ մատաղրութիւն կայ նոյն գաղութը Սոսյ Կաթողիկոսութեան միացնելու: Արդէն դուրսէն եկած այնքան բազմադիմի հարուածներու տակ ընկճուած այս զգալի ազգն ու եկեղեցին, որ ներքին քայքայիչ պառակտումներու փառախօսի ալ ենթարկուած են, իղձի դուրս չափտի ըլլալ նոր պառակտումով մը կազմալուծելու:

Իրեն (Տ. Մուշեղ Եպ.) կը մնայ, իբրեւ խաղաղութեան եւ սիրոյ կրօնքին պիտակից պաշտօնայ մը, այնպիսի ընթացքի մը հետեւել, որ սիրաշահելով եւ չըվշտացնելով հանդերձ Ամերիկահայ գաղութը, միեւնոյն ասին բարձր բունէ Ազգ. հոգեւոր վերին իշխանութեան քրեալիմը. որ բարոյական ազդեցութեան մը վրայ հիմնուած է, եւ առանց որու չափտի կրնանք գտնել ազգային միութեան զօրաւոր կապ մը:

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՎ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՄՍՈՒԹԻՒՆ(1)

Է.

Պատրաստութիւններն աւարտած էին վերջապէս, եւ միկնումը կարգադրուած: Միակ խոչընդոտն էր Յուլիոսի առողջական վիճակը, որովհետեւ իր վերքերը բուժուած չէին տակաւին: Այս պատճառաւ հարկադրուած էր մի քանի օր, գուցէ

(1) Շար. Չնոր Թիւն սխալ:

մէկ քանի շաբաթ յետաձգել գործադրութիւնը իր վերջին որոշման, որ պիտի խղէր զինքն իր նախահայրերուն կրօնքին եւ աւանդութեանց միացնող կապը, եւ պիտի մտցնէր նոր ճամբու մը մէջ զոր ընտրած էր :

Առտու մը Յուլիոս արթնցած էր իր սովորական ակտիւ տրամադրութեանց տակ, երբ ինչոք տրուեցաւ թէ իր ճարտարութեամբ մեծ հոշակ հանած բժիշկ մը որ զիպուածաւ իրենց քաղաքը կը դադարէր, փափաք յայտնած էր զինքը տեսնելու եւ կը խոստանար կարճ ժամանակի մէջ վերադարձնել անոր առողջութիւնն եւ ուժը : Յուլիոս չափ զոհ մնաց, եւ ըսաւ որ կ'ուզէ անմիջապէս տեսնել բժիշկը : Գանի մը վայրկեան ետքը դէմ առ դէմ կը գտնուէր ճիշտ այն օտարականին, որուն հանդպած եւ որուն հետ երկար տեսակցութիւն մը ունեցած էր շատ տարիներ առաջ, երբ Քրիստոսեաներուն քով երթալու համար ճամբայ ելած էր :

Բժիշկը, խնամով քննելէ հտքը Յուլիոսի վէրքերը, մէկ քանի պարզ բոյսերու խաշած ջուրը յանձնարարեց, որ ըսաւ՝ պիտի ուժովցնէ հիւանդը եւ պիտի փութացնէ անոր առաքելութիւնը :

— Պիտի կրնամ ձեռքերովս աշխատիլ, հարցուց Յուլիոս :

— Անշուշտ, պիտի կրնաք կառք վարել նոյնքան ճարտարութեամբ որքան ըրած էք ցարդ, պիտի կրնաք նաեւ ուղածնուդ չափ զիր զրել :

— Այո՛, բայց ես ըսել կ'ուզեմ թէ պիտի կրնամ ձեռական աշխատութեամբ պարապիլ, օրինակի համար երկիրը պեղել, հերկել եւն :

— Օ՛հ, կը խոստովանիմ որ այդ տեսակ աշխատութիւն մը չէի անցուցած մտքէս, ըսաւ բժիշկը, որովհետեւ ձեր դիրքն ունեցող մարդ մը երբէք տոբի չպիտի ունենայ այդ տեսակ զբաղմունքով պարապելու :

— Ընդհակառակն, այսուհետեւ ճիշտ այդ տեսակ աշխատութիւններ պիտի ունենամ, ըսաւ Յուլիոս :

Եւ օտարականին պատմեց թէ խղճա-

մտորէն հետեւած էր իր խորհուրդներուն եւ ուսումնասիրած էր կեանքը, եւ այն եղբակացութեան յանդած էր թէ անիկայ դժնդակ հմայաթափութիւններ միայն կ'ընծայէ. ուստի այլեւս հաստատապէս որոշած է գործադրել իր երբեմնի դիտաւորութիւնը, այսինքն մանկ Բրիստոնեաներու համայնքին մէջ :

— Իրաւ որ, ըսաւ Տոքտորը, զձեզ կրցած են բռնել պատուական սարդի ոտտայնի մը մէջ, որոնք շինուած են հիանալի ստուծիւններէ, փայլուն ցնորքերէ : Կրցած են հրապուրել եւ կաշկանդել զձեզ : Զեզ նման մէկը, որ ընկերային այնքան բարձր գիրք մը կը գրաւէ, բարձր պաշտօն մը ունի, յարգանք կը վայելէ, եւ մեծ ալ պատասխանատուութիւններ ըստանձնած է, — պատասխանատուութիւն՝ մասնաւորապէս ձեր վաւակներուն հանդէպ, — ի՞նչպէս կ'ըլլայ որ չի կրնար խորտակիլ այս զիմակը եւ մերժել, հեռացնել իրմէ այս սխալանքները :

— Կարդացէ՛ք այս գիրքը, ըսաւ Յուլիոս, իր խօսակցին կարկառելով այն ձեռագիրը զոր քանի մը օր առաջ կարդացած էր, եւ որ հրաշալի արդիւնք մը ունեցած էր :

Տօքտորը մագաղաթը ձեռքն առնելով ակնարկ մը նետեց անոր վրայ :

— Տեսած եմ ասիկայ, ըսաւ, բայց զիս զարմացնողն այն է որ ձեզի նման մտացի մէկը այնքան դիւրութեամբ ինկած է ծուղակի մէջ :

— Չեմ հասկնար, ի՞նչ ծուղակ :

— Այս ամէնուն ողին իսկ մարդկային կեանքի սխալ ըմբռնումի մը վրայ հիմնուած է : Աստուածներուն եւ մարդոց դէմ ըմբոստ իմաստակներ են ամէն անոնք որ կը յայտարարեն թէ դէպի երջանկութիւն առաջնորդող ճամբայ մը կայ : Անոնք կեանքն այնպէս մը կազմակերպուած կը կարծեն, որ կ'երեւակայեն թէ բոլոր մարդիկ կրնան երջանիկ ըլլալ, եւ կրնայ ըլլալ որ ա՛լ չգտնուի ոչ պատեւազմ, ոչ զլխատութիւն, ոչ ոճիւր, ոչ ազգաստութիւն, ոչ անը սրոյութիւն, ոչ վէճ եւ ոչ ասելութիւն : Եւ յետոյ, կը հա-

մարձակին պնդել թէ բոլոր այդ ծրագիրը պիտի կրնայ գործադրուիլ, երբ ամէն մարդիկ հնազանդին Քրիստոսի պատուէրն հերոն : Բայց, իրապէս, զգայախաբութեան ենթակայ կ'ըլլան ու կ'ընեն, արդիւնքը պատճառին տեղ առնելով : Չվիճիլ, չհերքուլ, ցոփութենէ զգուշանալ, եւնայս է բուն նպատակն որուն պէտք է հասնիլ, եւ ատոր հասնելու միակ միջոցն է ի դորձ դնել այն միջոցները զորս ընկերային կեանքը կ'ընծայէ մեզ : Իրողութիւնները ներկայացնելու իրենց եղանակը գրեթէ նոյնքան բնական եւ տրամաբանական է, որքան պիտի ըլլար վարդապետի մը մեթոտը երբ կ'ըսէ իր աշակերտին. «Պիւրաւ պիտի հասնիս նշանատախտակին կեդրոնը, եթէ նետը՝ աղեղէն մեկնելէն հոքը բացարձակապէս ուղիղ զծով մը ընթանայ մինչեւ գրոշեալ կէտը» : Խնդիրն այն է սակայն թէ ինչպէս պէտք է ընել որ նետը փափաքուածին չափ ուղիղ զծով ընթանայ : Ահա՛ այս է խնդրոյն լուծումը. եւ զայն մէջտեղ դնել՝ անոր լուծումը չի նշանակիր, Նեոաճգութեան մէջ խնդիրը կը լուծուի, երբ գործադրութիւն կարգ մը պայմաններ, ինչպէս աղեղին թելը պրկուած ըլլալ, աղեղը առաճգականութեան լաւ վիճակի մէջ գտնուիլ, նետը ուղիղ բռնել, եւն. հւն. : Այսպէս է նաեւ կեանքի մէջ : Կեանքի լաւագոյն եղանակը, — այն որ պիտի ջնջէ կամ գոհ պիտի նուազեցնէ վէճերը, անբարոյութիւնը, սպանութիւնը, եւն. — կարելի է ձեռք բերել աղեղին թելը պրկելով՝ այսինքն իմաստուն եւ փորձ կատարարողներ ունենալով, աղեղը լաւ վիճակի մէջ առաճգական պահելով՝ այսինքն ուժը իշխանութեան արամադրութեան տակ թողլով, նետը ուղղաձիգ բռնելով՝ այսինքն արդար եւ անկողմնակալ օրէնքներ ունենալով : Արդ, Քրիստոսեաները, կեանքի լաւագոյն եղանակը հաստատելու պատրուակին տակ, կը քանդեն, կ'աւերեն ամէն ինչ որ բարւոքած է եւ տակաւին կը ձգտի բարւոքել մարդկային գոյութիւնը : Անոնք չեն ճանշնար ո՛չ կառավարիչներ, ո՛չ իշխանութիւն, եւ ո՛չ օրէնք :

— Բայց կը պնդեն թէ առանց կառավարիչի, առանց իշխանութեան եւ առանց օրէնքի, մարդկային կեանքն աւելի երջանիկ պիտի ըլլայ, բաւական է որ ամէն մարդ հետեւի Քրիստոսի վարդապետութեան :

— Այո՛, շատ լաւ. բայց ի՞նչ ապահովութիւն ունինք թէ մարդիկ պիտի հետեւին այդ վարդապետութեան : Բացարձակապէս ոչինչ : Անոնք կ'ըսեն. «Կեանքը փորձեցիք օրէնքներով եւ իշխանութիւններով, եւ յուսախաբութիւն միայն կրեցիք. հիմալ ալ փորձեցէք կեանքը առանց օրէնքի եւ առանց իշխանութեան, եւ զայն կատարեալ պիտի դնէք, չէք կրնար ուրանալ ասիկայ, որովհետեւ փորձը չէք բրած» : Տեսէ՛ք, ի՞նչ սխալի մէջ կ'իյնան այս իմաստակաները : Այս ըսելու ատեն հուսով տրամաբանական են քան այն երկրագործն որ ըսէր. «Յորեն կը ցանէք, հողը կը հերկէք, եւ սակայն ձեռք բերուած հունձքը շատ քիչ կ'ըլլայ ձեր բաղձացածէն : Ուրեմն ցորենը ծովուն մէջ ցանեցէք, եւ արդիւնքը շատ աւելի գոհացուցիչ պիտի ըլլայ Մի՛ ուրանաք, իրաւունք չունիք այդպէս ընելու, քանի որ ըսածիս փորձը բրած չէք տակաւին» :

— Սառաղիւ ձեր ըսածին մէջ շատ ճշմարտութիւն կայ, պատասխանեց Յուլիոս՝ որ իր որոշման մէջ արդէն խախտած էր :

— Եւ ամէնն այս չէ, չարունակեց Տոքսորը, թէ եւ անհեթեթ, անհնար բան, բայց ենթադրենք թէ Քրիստոսեաներու երազն իրականանայ, եւ իրենց հաւատքը, համոզումները, իրենց հիմնական սովորութիւնները ներարկուին բոլոր մարդկային ազգին՝ բժշկական գեղերու կաթիլներով, եւ օրին մէկը յանկարծ բոլոր մարդիկ ուղեն հետեւիլ Քրիստոսի վարդապետութիւններուն, սիրել Աստուած եւ իրենց՝ զբային, եւ հնազանդիլ տրուած պատուէրներուն : Արդ, նոյն իսկ այս պարագային, կը պնդեն որ իրենց զբոյն մէջ պարզուած կենցաղի եղանակը չի կրնար զիմանալ քննադատութեան : Նոյն իսկ կեանքը գոյութիւն չպիտի ունենար. պի-

տի դադարէր: Իրենց վարդապետը թափառարջիկ ամուրի մըն էր, իրեն հետեւողները, — կ'ենթադրենք թէ — պիտի ըլլան ինչ որ էր իրենց տէրը, եւ այսպէս՝ ամբողջ մարդկային ազգը: Անոնք որ հասուն տարիքի մէջ են հիմայ, պիտի շաշունակեն ապրիլ, բայց տղաքները չպիտի ապրին, եւ կամ հազիւ տասնին մէկը: Իրենց վարդապետութեան համաձայն, արդաք պէտք է որ հաւասար ըլլան, եւ ծնողքները պէտք չէ որ իրենց հարազատ զաւակին նախապատուութիւն տան ուրիշներու վրայ: Հիմայ կը հարցնեմ ձեզի. այս աղաքը պիտի սիրուի՞ն, պիտի խնամուի՞ն, պիտի կրթուի՞ն եւ վերջապէս պիտի պաշտպանուի՞ն: Լեանքին սպառնացող ամէն կարգի վտանգներու դէմ, մինչ մինք կը տեսնենք արդէն թէ մայրական սէրն իսկ չի բաւեր այս պղծիկ էտիները պաշտպանելու զմբախտութեանց եւ մահուան դէմ:

«Եթէ տղաքները իրենց համար ամենէն նպաստաւոր պայմաններու մէջ կ'իյնան՝ ինչպէս ցորենը մանգաղին տակ, ինչ պիտի ըլլան եթէ մայրական գութը բանքը ալիւս բոլոր տղաքներու վրայ տարածուած գութ մը միայն ըլլայ: Որո՞նք պիտի ըլլայ այն աղան զոր պիտի մեծնէ ու կրթէ: Ո՞վ պիտի հսկէ գիշերներով՝ հիւանդ աղուն վրայ, — որ ճիշտ հիւանդ ըլլալուն պատճառով կրնայ պժգանք աղքատ վիճակ մը ունենալ — եթէ ոչ մայրը որ լոյս աշխարհ բերաւ զինքը: Բնութիւնը մանուկը օժտած է վաճանդ մը, որ մայրական սէրն է: Քրիստոնեաները ստիպեալ կը խլին անկէ, առանց տեղը բան մը դնելու: Ո՞վ պիտի դաստիարակէ մանուկը, կազմէ անոր նկարագիրը, թափանցէ մինչեւ անոր պզտիկ հոգիին խորը, պիտի ձուլէ լաւագոյն դասած կաղապարին մէջ, թէ ոչ այդ աղուն հարազատ հայրը: Ո՞վ պիտի գերծ պահէ զայն տառապանքներէ եւ վտանգներէ: Այս ամէնը կ'անհետանայ Քրիստոնէութեամբ, եւ նոյն իսկ կեանքը, ըսել կ'ուզեմ մարդկային ցեղին շարունակութիւնը, նմանապէս կ'անհետանայ:

— Այդ կէտին մէջ ալ իրաւունք ունիք, ըսաւ Յուլիոս, հմայուելով բժիշկին եռանդուն ու զրական պերճախօսութիւնէն:

— Ո՛չ, բարեկամս, փախէք այս չափազանցութիւններէն, ապրեցէք ողջմտութեան սկզբունքներուն համաձայն, մանաւանդ հիմա որ աշխարհիկ կեանքի մէջ այնքան ազնիւ, կարեւոր եւ ստիպողական պաշտօն մը ստանձնած էք, եւ ձեր պատիւը կը պահանջէ խղճմտօրէն ի գլուխ հանել զայն: Դուք ապրեցաք, մանկու համար տարակոյսի, անստուգութեան այս երկրորդ շրջանին մէջ, եւ հիմա եթէ տառջ քալէք, տարակոյսները պիտի փարատին: Ձեր առաջին եւ ստիպողական պարտականութիւնն է ձեռք առնել ձեր զաւակներուն դաստիարակութիւնը, զոր գծախտաբար չափազանց անախտած էք ցարդ: Պարտաւոր էք զանոնք պատուաւոր ծառաներ ընել Պետութեան: Պետութիւնը ձեզ ընծայեր է բոլոր ինչ որ ունիք, եւ դուք պարտաւոր էք հատուցանել զայն, ձեր զաւակները լաւ քաղաքացիներ ընելով: Ընկերային կեանքը տակաւին ձեզմէ ուրիշ բան ալ կը սպասէ: Անյաջողութիւնը դառնացուցած է ձեզ, ձեր յոյսերուն մէջ խառնած էք, բայց ասիկայ արկած մըն է միայն: Մարդ երբէք բան մը ձեռք չի բերիր առանց ճիգի եւ պայքարի. զմուտաւ ձեռք բերուած յաղթանակը յառաջ կը բերէ յաղթութեան եւ փառքի հաճոյքը: Թողէք որ ձեր կինը զբօսնու Քրիստոնեայ հեղինակներու գրաբանութիւններով, Պէտք է էրիկ-մարդ ըլլալ, եւ այնպէս ընել ձեր զաւակները: Գործի սկսեցէք, եւ համոզում գոյացուցէք թէ ձեր ստրտականութիւնը կը կատարէք: Այն ատեն բոլոր այս ցնորքները պիտի փարատին ամպի մը պէս, որովհետեւ ասոնք ախտանշաններ, կամ թերեւս արդիւնքն են հիւանդագին զգայնոտութեան որուն մէջ ընկղմած էք: Կատարեցէք ձեր պարտականութիւններն ազգին հանդէպ՝ հաւատարմօրէն ծառայելով անոր, եւ կրթելով ձեր զաւակները որպէս զի օր մը իրենց կարգին անոնք ալ ծառայեն: Անկախ ըրէք զանոնք նկարագրով, անձնուէր, ձեզի յաջորդելու կարող եւ արժանի, եւ յետոյ, այս ամէնն ընելէ ետքը, եթէ կ'ուզէք, փորձեցէք այն նոր կեանքն որ ձեզ կը հրապուրէ: Բայց մինչեւ այն ատեն իրաւունք չունիք ձեր պաշտօնը լքելու: Եթէ լքանէք, յստախարութիւն եւ տառապանք միայն պիտի գտնէք:

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Դ Ի Ի Ա Ն

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ

ՄԵՆԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՊՈՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ա.

Ի գիտութիւն բարեպաշտ Հայ-հայտարակութեան, կը ծանուցուի որ ներկայ տարւոյ Հոկտ. 23ին, ի Տօնի Դիւտ Խաչի, Ս. Միւռնի օրհնութիւն պիտի կատարուի Կիլիկեան Հայրապետական Մայր-Տաճարին մէջ:

Բ.

Տ. Սահակ Ս. Կաթողիկոսը, Տեառն յաջողութեամբ, մտադրած է Մեծին Կիրակոսի շինած Կիլիկիոյ Մայր-Տաճարը վերանորոգել, որուն ծախսը՝ ըստ քննութեան՝ ճարտարապետաց՝ գնահատուած է 7-800 ոսկւոյ: Այսպիսի նուիրական ձեռնարկի մը մասնակցելու փափագող Կիլիկեցի եւ այլ բարեպաշտներու նուիրատուութիւնք շնորհակալութեամբ ընդունուելով, յատկահովութիւն եւ ի միամտութիւն՝ թերթերու մէջ պիտի հրատարակուին: Նուիրատուութիւնք ուղղակի Ն. Ս. Օ. ծովութեան անուան պէտք է զրկուին: Եօզղատի վիճակայինք այս նպատակաւ հարիւր ոսկի տրամադրած են:

Քարտուղար Կաթողիկոսարանի

7 Սպ. 1911

Գիտ. Ս. ՎԱՐԴԱՊԵՏ

Սիւս

(Կնիք Կաթողիկոսարանի Կիլիկիոյ)

ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐԸ

ԱԶԳ. ԺՈՂՈՎԻՆ ԱՌՋԵԻ

Վերջապէս:

Ազգ. Ժողովը անցեալ ուրբաթ օրը

կրցաւ գումարուիլ, 74 անդամներու ներկայութեամբ, որ ի վերջոյ 90ի յանգեցաւ: Այդ նիստին մէջ ժողովը զբաղեցաւ միայն հարստահարութեանց խնդրով, որուն վերայ տեարք երեսփոխանք ազգու, յուզեալ բառերով իրենց կարծիքը պարզեցին յայտնելով իրենց զիտողութիւնները՝ Վարչութեան կազմած ծրագրին մասին: Տ. Հմայեակ Մարազանե ետքը, որ կ'առաջարկէր յանձնաժողով մը կազմել որ Բաղ. Ժողովին միանալով յիշատակագիր մը պատրաստէ՝ Օսմ. Խորհրդարանին մատուցուելու համար, խօսեցաւ Մշոյ երեսփոխան Գեղամ Էֆ. Տ. Կարապետեան, որ ուշագրաւ տեղեկութիւններ տուաւ հոգային խնդրոյն վրայ: Վառնշապուհ Էֆ. Մանսուեան ազգային որոշ քաղաքականութիւն մը ունենալու պէտքը չեղտեց, եւ միւս կողմէ գաւառի ազգային անձերը՝ միւսքեղայիպէսերը պատմել կարենալու համար զանոնք օրէնքով պատասխանատուութեան ենթարկող յանցանքով մը ամբաստանելու հարկը մոտանալէն իրեն ուժ տուաւ Հմայեակ Էֆ. Խոսրովեան, չեղտելով ինք ալ որոշ քաղաքականութիւն մը ունենալու հարկը, ներքոյն ըբաւ յեղափոխութեան կատարած գործին, եւ աւելցուց թէ օրէնքի ճամբան ընտրել անհրաժեշտ է, ուստի ինք ալ առաջարկեց Խորհրդարանական յանձնաժողով մը կազմել՝ Շապուհ Էֆ. ի նախագահութեամբ: Դաւիթ Էֆ. Տ. Մովսէսեան ըսաւ թէ Վարչութիւնը տակաւին յուսահատած չէ կատարութեան մօտ իր ընելիք գիծումներէն. համամիտ չգտնուեցաւ Օսմ. Խորհրդարանին զիմելու առաջարկին, հաստատեց թէ կատարութեան հղած առաջարկները պէտք է օրէնքի մը վրայ հաստատուած ըլլան, եւ աւելցնելէ ետքը թէ ազգային քաղաքականութիւն ըսելով ինք կը հասկնայ պահանջը՝ օրէնքներէն հաւասար չափով օգտուելու, ընդդիմախօսեց Խորհրդական Էֆ. ի մասին յեղափոխութեան կատարած գործին: «Դորք մը իր արդիւնքէն պէտք է դատել, ըսաւ. եթէ մեր յեղափոխականները բոլոր քաղաքագիտական օրէնքները նկատի առած եւ

ճշմարիտ յեղափոխականներ ըլլային, այս արդիւնքին չպիտի յանգէին» (Աղմուկներ)։

Դաւթ Տ. Մովսէսեան Էֆէնտի բն-
դունելի չնկատեց Ատենայեւոյ գիւանի
ծրագիրը, եւ առաջարկեց համամտու-
թիւն յայտնել Վարչութեան ծրագրին, եւ
պաշտօն տալ որ կարող մը ամփոփումնե-
րով այդ ծրագիրը ներկայացնէ Բ. Դրան,
եւ անոր գործադրութիւնը պահանջէ շը-
նայեակ կէփ. Արաւմեանց անբաւարար նը-
կատեց երկու ծրագրերն ալ, եւ համամիտ
զանուեցաւ. խորհրդարանական յանձնա-
ժողով մը կազմելու առաջարկին։ Հնայ-
եակ ֆին. Էֆեռնեան համամիտ դտնուե-
ցաւ Օսմ. Խորհրդարան զիմելու առաջար-
կին։ Յ. Շահրիկեան Էֆ. երկու ծրագ-
րերն ալ թերի զտաւ։ Անհրաժեշտ նկա-
տեց որ յիշատակագրին մէջ ճշտուին
երկու կէտեր. — 1. Այն խնդիրներն ու-
րոնց համար օրէնք կայ եւ չի գործադ-
րուիր։ Ասոնց համար պէտք է զիմել գոր-
ծադիր իշխանութեան (Բ. Դրան) որ զոր-
ծադրէ։ 2. Անոնք որոնց համար երբեք
օրէնք չկայ, Ասոնց համար պէտք է զի-
մել Օսմ. խորհրդարանին որ օրէնք չինէ։
«Այսօր Բ. Դուռը հին ունեւորն օրէնքն
զուրս ձգուած Հայութեան իրաւագրկու-
թիւնն օրինականացնել կ'ուզէ, ուղի մը-
տայնութեան դէմ պէտք է մտքադնէ»։
Ա. Վրաւմեան Էֆ. հարցոյց թէ «Պէտք է
հասկնալ որ Հայերը միայն հպատակներ,
սուրբ առողջներ եւ ջարդողներ են,
թէ պաշտպանուելու իրաւունքներ ունին։
Պէտք է Վարչութեան իրաւասութիւն
տալ՝ որպէս զի յանուն Ազգ. Ժողովին
հարկ եղած նախնական զիմումներն ընէ
գործադիր իշխանութեան, յետոյ կը զի-
մենք մենք Օսմ. Խորհրդարանին, եւ վեր-
ջէն Սուլթանին, իբր պէտ եւ Խալիֆա
այս երկրին»։

Այս բոլոր բանախօսութիւններէն ետ-
քը, ի զիմաց Վարչութեան Վ. Բարադեան
էֆ. յայտարարաւորեց թէ «Վարչութեան
յիշատակագրի ուրուագծին պատրաստու-
թեան ընթացքին (մէկ ու կէս ամիս) ի-
րերու վիճակն աւելի յուսահատական դար-
ձաւ։ Սահմանադրութեան հոշակումէն

ի վեր Պատրիարքարանի բոլոր զիմումնե-
րէն հազիւ քանի մը հատին գոհացում
տրուած էր, իսկ մեր Վարչութեան ոչ մէկ
զիմումն զոհացում տրուեցաւ, միւս
կողմէ չարիքը գաւառներուն մէջ աւելի
լայն ծաւալ ստացաւ. . . Կիսով չափ
յուսահատած ենք, բայց համաձայն կնք
որ վերջին փորձ մ'ալ ըլլայ, վերջին գե-
րագոյն զիմում մ'ալ, եւ համաձայն ենք
որ Վարչութիւնը կազմէ յիշատակագիրը,
օգտուելով Ժողովի մէջ եղած թեւադրու-
թիւններէն. բայց զիմումն ասին կու-
գենք որ Ժողովէք Բ. Դրան վրայ ազդե-
լու բնգունակ մէկ քանի անձեր տաք»։
Վ. Բարադեան էֆ. անձնապէս առաջար-
կեց նաեւ որ թէ՛ Եւրոպայի եւ թէ՛ Թուրք
լաւագոյն մտաւորականութիւնը լուսա-
բանուելու համար ֆրանսերէն եւ թուր-
քերէն լեզուներով ընդարձակ վիճակա-
գրութիւն մը հրատարակուի, բոլոր այս
կարգի հարցերուն լուսաբանութեամբ եւ
օրինական լուծումովը։

Ժողովն այս բոլոր բացատրութիւննե-
րը ըսելէ ետքը, նկատի առաւ ներկայաց-
ուած իրարու նմանող չորս բանաձեւեր,
զորս հաշտեցնելով՝ կազմեց հետեւեալ բա-
նաձեւը զոր միաձայնութեամբ ընդու-
նեց. —

«Ժողովն Օսմ. Խորհրդարանին մատուցանելի
յիշատակագրի մասին Ատենայեւոյ գիւանին 12
Մայիս 1909 Թուակիր տեղեկագիրը, ինչպէս եւ
Ազգ. Վարչութեան կողմէ բերուած յիշատակագրին
առաջարկներու ամփոփումը նկատողութեան առնե-
լով, յետ վիճարանութեան կ'որոշէ. — 1. Առ այժմ
յետաձգել Օսմ. Խորհրդարանին ըլլալիք զիմումը,
մինչեւ որ Ազգ. Վարչութիւնը չյայտարարէ թէ իր
կողմէ Օսմ. Կառավարութեան մօտ կ'ատարուած զի-
մումները վերջնապէս ապարդիւն ֆապս են։ — 2.
Յանձնարարել Ազգ. Վարչութեան՝ Ատենայեւոյ
գիւանի տեղեկագրին եւ իր կողմէ ներկայացուած
առաջարկներու ամփոփման եւ այդ առթիւ Ազգ. Ժո-
ղովոյ մէջ յայտնուած տեսութեանց հիման վրայ նոր
եւ ազդու զիմում մը կ'ատարել Օսմ. Կառավարութեան
մօտ, իրագործել տալու համար ուղղին անյետաձը-
գելի պահանջները, որպէս զի վերջ տրուի հայա-
բնակ նահանգներու մէջ շարունակուող անապահո-
վութեան եւ հարստահարութեան»։

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ ԴՆ. օր խորհրդակցե-
ցաւ Ազգ. Ժողովոյ որոշման համաձայն

Բ. Դրան ըստի՞նք զիմուսին մասին, եւ յիշատակագրի պատգամութեան համար յանձնածողով մը կարգեց Տ. Գրիգորիս Մ. Վ.էն, եւ Վ. Բարազեան, Վ. Մանուկեան, Դ. Տ. Մովսէսեան եւ Ա. Վասման Էֆ.ներէն: — Գաւառներէն շատեր կու թող. ընարութեան համար իրենց պատգամաւորներն որոշած չըլլալով, ժողովն որոշեց հետագայի զաւանդերը, որ օր առաջ ընարեն իրենց պատգամաւորները: — Բանկալթիի գերեզմանատան խնդրոյն վերայ լսելէ ետքը Տիրան Էֆ. Երկանեանի յանուարեան արգելքը, որոշեց յանձնածողով մը կարգել Ռ. Բարազեան, Ս. Էսմէրեան, Տ. Երկանեան եւ Պ. Սինանեան Էֆ.ներէն, որոնք խնդիրն օրինական աւսակետով անգամ մ'ալ պիտի ընեն, եւ պիտի հաստատեն ազգին իրաւունքն այդ գերեզմանատան գեանին վրայ:

ՊԱՅՐԱՄԻ առաջին օրը, Տեղապահ Ս. Հայրը միւս Հոգեւոր Պետերուն հետ կայսեր ներկայացաւ: Ն. Վեհափառութիւնը ժպտադէմ շնորհակալութիւն յայտնած է Հոգեւոր Պետերուն մտլթանքներուն համար:

ԱՐՄԱՇՈՒ ՈՒՅՏԱԳԵՆԱՅՈՒԹԻՒՆԸ յուզումնային եղաւ այս տարի, «առողջապահական աւսակետով» զրուած արդիւքին հետեւանօք: Վանահայրէն անցեալ շաբթու հեռագրուած էր թէ «հակառակ Միւթէսարըֆին հրամանին, տեղւոյս միւսիւրը թող չէ տուած որ ուխտաւորները վանք մանեն. ուխտաւորները խնուած են դիւղին մէջ, կիներ եւ աղտքներ կուլան, վանքը մեծապէս վնասուած է»: Այս հեռագրին վրայ Պատրիարքարանէն թէեւ պէտք եղած ձեռնարկներն ըլլալով, Շր. օրը բոլոր ուխտաւորներն արտօնուեցան վանք մտնելու, բայց անրացատրելի կը մնայ տեղւոյն միւսիւրին ընթացքը, որ Եջ. եւ Ուր. օրերը իր պարտականութենէն շատ անդին անցնելով ուխտաւորաց հանդէպ խիստ անպատշաճ ընթացքի մէջ գտանուեր է: Եջ. օր Իզմիտի կառավարչին արտօնագիրն ստանալէ ետքը պահակներ դրեր է Իզմիտի ճամբուն վրայ եւ 50է աւելի կառք եւ զարձուցեր է, նոյնպէս ետ զարձուեր են ուրբաթ օր Ատաբաղարէն եկող 60 կառքեր: Միւսիւրը դիմեր է նաեւ ցաւայի չափազանցութիւններու, ոստիկանական ուժ փորձելով ուխտաւորներուն դէմ, եւ ստիկան զինուորներ զրկելով եկեղեցին, որոնք սուրերով ներս մտնելով, այնտեղ ուխտի եկող իսլամ կիներ եւ այրեր դուրս հաներ են ստիպմամբ, «ի՞նչ գործ ունիք կեանքը»:

ներուն աղօթատեղին» ըսելով. արարք մը որ բռնապետութեան ամենէն կրակոտ օրերուն իսկ տեղի չէր ունեցած: Շր. օր ալ երկու աղոյ՝ վերարկու մը եւ ժամացոյց մը զողնալուն առթիւ, ոստիկանութիւնն 300 ազաք՝ 8-12 տարեկան՝ կապելով բանտարկելու է, եւ նոյն իսկ գանակոծութիւն եղեր է: Գողերը կը զրտնուին, սակայն ձերբակալուած աղոյմէն 45ը ընդ հսկողութեամբ Իզմիտ կը զըրկուին, իբրեւ անպաշտպան եւ ծնողքին վանքէն բացակայ: Հայաբնակ հեռաւոր նահանգներու մէջ գործուած արիւնշալից ոճիրներու հեղինակներուն հանդէպ այս խստութեանց մէկ տասներորդն իսկ ի գործ կը դրուի՞ արդեօք:

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԸ կրկին դիմում ըրած է Բ. Դուռ, յատաջիկայ տարուան պիւտքէին մէջ անցընելու կրիկիոյ կարօտեաներուն համար սահմանուած 10,000 ոսկիի նպաստը:

ՄԱՐԻԻԴԻԻԴԻ քարոզչութեան կոչուած է Գեր. Տ. Գարբիէլ Եպիսկ. ձէվահերձեան, Տ. Վահրամ Վ. Նազարէթեանի Շ. Գարահիսարի Տեղապահ անուանուելուն առթիւ: Իսկ Ղալաթիոյ քարոզիչ անուանուած է Տ. Գրիգորիս Մ. Վ. Պալաքեան:

ՀԱՅ-ՀՈՒՄԷՍԿԱՆԱՅ Ընդհ. ժողովը անցեալ շաբթու լիազումար նիստի մը մէջ միաձայնութեամբ հրաժարեցոյց Թէրզեան Պատրիարքը, այն եզրակացութեան գալով թէ «քանի որ անիկա ոչ միայն նոր կանոնագիրը ազգին զգացման համապատասխան կերպով կազմելու կողմը չէ, այլեւ արդէն գոյութիւն ունեցող կանոնագիրը չի ճանչնար, եւ փոխանորդ ու զօրծակատար կ'անուանէ ուղղակի՝ արհամարհելով ամէն կանոն եւ պատշաճութիւն, իրաւունք չունի Ազգին ներկայացուցիչն ըլլալու»:

Կառավարութիւնը քեզիքն մը ուղղելով Հայ-հռոմէականաց Պատրիարքարանը, կ'արգիլէ Թըքահայ եպիսկոպոսներուն Սինօգ գումարել Հռոմի մէջ, մինչեւ որ հասկցուի եւ բացատրուի այդ հաւաքման բուն նպատակը. կը դիտուի միւս կողմէ որ Հայ-հռոմէականաց Ընդհ. ժողովը Պատրիարքը զաղրիցուցած ըլլալով իր պաշտօնէն, Թէրզեան արդէն իրաւասութիւն չունի Սինօգ գումարելու:

Արտօնատէր ՀՄԱՅՆԱԿ ԲԶՆՑ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ԲԶՆՑ. ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ



ԿԸ
ՏՊԱՐԱՆ
ԱՅՅԱԲԱՐՏԵՐ
ՏՈՐԱԿՆԵՐ
ՆԱՄԱԿԱԳԼՈՒԽՆԵՐ
ԹԵՐԹԵՐ, ՀԱՆԴԷՄՆԵՐ
և ն. և ն.

Տ Պ Ա Ր Ա Ն

ՏԻԳՐԱՆ ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

(Հիմնում 1899 ին ի Բարիզ)

Լ. ՊՈԼԻՍ, Մուլան-Համա, Մոլա-Թաք, թիւ 16



Ամէն տեսակ միագոյն եւ բազմագոյն սպագրութիւն,
շէնդ եւ պարզ, մաքուր, խնամեալ եւ աժանագին:

Ասկէ առաջ ստացեր էինք ARMENIA-ի Յունիս եւ Յուլիս համարները, որոնք Ամերիկեան Հանգէսի մը վայելչութիւնը եւ գեղեցիկ պարունակութիւնը ունէին։ Կողքի վարդանկարը, յօդուածներու կըցուած լուսանկարները մասնաւոր գեղեցկութիւն մը կուտան ARMENIA-ին, որ հիմա 36 երեսներէ կը բաղկանայ՝ փոխանակ առաջուան 24ին։

Ստացանք նաեւ Օդոստոսի թիւը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական ու նշանաւոր վէպ մը՝ «Լընտըն Թայմզ»-ի խմբագիրներէն Frederick Harrison-ի գլուխէն։ Տաղանդաւոր Անգլիացի գրագէտը այս վէպով կը ջանայ նկարագրել Հայ թագաւորներուն խաղած նշանաւոր դերը Բիւզանդական կայսրութեան մէջ՝ տաս-

ներորդ դարուն։ Ամէն Հայ կարդալու է այս վէպը, տեսնելու համար թէ ինչպէս Չմշկիկ ու Նիկոֆոր Հայաղն կայսրերն ամբողջ Բիւզանդական աշխարհը կը սանձաւարէին։

Միւս ուշագրաւ եւ գեղեցիկ յօդուածներուն մէջ հարկ է յիշել մասնաւորապէս Miss Alice Stone Blackwell-ի հոյակապ թարգմանութիւնը Սիւմանթոյի «Ասպետին Երգ»ին։

ARMENIA-ի տարեկան բաժնեգինն է՝ մէկ տալէր Ամերիկայի, տալէր ու կէս արտասահմանի համար՝ բացարձակապէս կանխիկ։

Դիմել՝ Editor of Armenia,

P. O. Box 209 M. S. S.

New York City

ԳԻՆ 1 ՂՐՈՒԺ

Տպագր. Տ. ՏՕՂԱՄԱՆԵԱՆ

Սուրբան-Համար՝ Մօշա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ